

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԱՄԱՍԻԱ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ
(ԾԱԾԿԱԳԻՐ 3.3.3) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻՅԱ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.3.3)

Երկրորդ կարգի մասնագետը՝

ա/ ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,

բ/Իրականացնում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը:

գ/Հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների, համապատասխան ժամկետում, կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին:

դ/Իր լիազորությունների սահմանում, անհրաժեշտության դեպքում, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է իր աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև առաջարկություններ, տեղեկանքներ հաշվետվություններ, միջնետրոգազրեր, զեկուցագեր և այլ գրություններ.

ե/քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների հետ կապված աշխատանքներ.

զ/ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը:

է/իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է ունենալ՝

ա/միջնակարգ կրթություն

բ/ունի ՀՀ Սահմանադրության <<Համայնքային ծառայության մասին>>,<<Տեղական ինքնակառավարման մասին>>,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, ՀՀ օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի <<Գույքահարկի մասին>>, <<Հողի հարկի մասին>>, ՀՀ օրենքների/անհրաժեշտ

իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

գ/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթին մասնկացելու համար դիմողները պետք է տեղեկացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա/ գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ/համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույքի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019թվականի փետրվարի 15-ի N98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ/հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

ե/«Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի >>էէ կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են նաև զինգրքույքի կամ դրան փոխարնող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ/ երկու լուսանկար (3x4 չափսի)

է/անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնկացելու համար փաստաթղթերը ներկայացնելու անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են Ամասիա համայնքապետարանի շենքում հասցե գ. Ամասիա 1փ. 40/1 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակզմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունում, (ք. Արմավիր Խ. Աբովյան 71) ամեն օր ժամը 9:00-ից մինչև 18:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ամասիա համայնքապետարանի աշխատակազմ (գ. Ամասիա 1փ 40/1 հասցեյով հեռ. 093 11 29 80) ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ. Աբովյան 71) հեռ. (0237) 2-07-70 (0237) 2-76-49:

Մրցույթը կկայանա 2020թ հոկտեմբերի 20-ին`

Ժամը` 11:00-ին երկրորդ կարգի մասնագետի/ ծածկագիր 3.3.-3/

Ամասիա համայնքապետարանի շենքում /գ. Ամասիա 1փ. 40/1:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2020թ հոկտեմբերի 05-ին ժամը 18:00:

Հասցե` ՀՀ Արմավիրի մարզ գ. Ամասիա 1փ 40/1

Հեռ. 093 30 60 40